Լեռնային Ղարաբաղի համակարտություն. պատմություն և պատմություններ

Միսիթար Գաբրիելյան

Կովկասյան տարածաշրջանի վերջին առնվազն մի քանի տասնամյակի հիմնական բնութագրիչներից մեկը, եթե ոչ հիմնականը, կոնֆլիկտայնությունն է: Չնայած Կովկասի՝ կոնֆլիկտային լինելու վերաբերյալ ավելի ու ավելի լայն տարածում ստացող պատկերացումներին, իրականում Կովկասը ոչ միշտ է եղել կոնֆլիկտային, ինչպես և ցանկացած այլ տարածաշրջան և կոնֆլիկտները ոչ միշտ են եղել էթնիկ՝ էթնիկության ձևավորման կամ կառուցարկման առանձնահատկություններով պայմանավորված:

Չնայած սրան, մեր օրերում և Հյուսիսային և Հարավային Կովկասում կոնֆլիկտների ու լարվածության հնարավոր օջախների թիվը շարունակում է մեծ մնալ, իսկ կոնֆլիկտներից և ոչ մեկի լուծման բանալիներ դեռևս գտնված չեն:

Ընդ որում, կոնֆլիկտներն ունեն տարբեր պատճառներ և պատմություններ՝ նախախորհրդայինից մինչև խորհրդային շրջան ձգվածությամբ: Մի դեպքում կոնֆլիկտի հիմքում հողային վեճն է, մեկ այլ դեպքում՝ խորհրդային շրջանի դեպորտացիան ու այսպես շարունակ:

Ռուս հետազոտող Վ. Շնիրելմանը, հակամարտությունների ուսումնասիրությամբ զբաղվող տասնյակ այլ մասնագետներ կոնֆլիկտների լուծման խիստ սահմանափակ հնարավորությունները, ի թիվս այլ գործոնների, բացատրում են առաջին հերթին «պատմությամբ», ավելի ճիշտ այն նարրատիվով, որ ցարական-ռուսական, այնուհետ՝ խորհրդային քաղաքական համակարգն ու պատմագիտությունը ստեղծում էին առաջին հերթին իրենց խնդիրների լուծման համար: Այդ պատմությունը գրեթե բոլոր դեպքերում ի վերջո հանգում է Հայրենիքի, հողի, ազգ/ցեղ/խումբ հանրույթի բացարձակ գերակայությանը անհատի ու անձնականի հանդեպ:

Այդպիսին է պատմության առասպելական շրջանը (ինչպես օրինակ հայերիս համար Հայկի և Բելի մասին առասպելը), պատմության ավելի ուշ շրջափուլերը (Հարավային և Հյուսիսային Կովկասում տարբեր դրսևորումներով. ալանական ժառանգության շուրջ պայքար, աղվանական ժառանգության շուրջ պայքար և այլն):

Պատմության այս կերպի բյուրեղացումը տեղի ունեցավ 19-20-րդ դարերում՝ ցարական, այնուհետ՝ խորհրդային իշխանությունների քաղաքականության պայմաններում:

Այդ քաղաքականության կարևոր արդյունքներից մեկը ինքնությունների վերակառուցարկումը և նոր ինքնությունների կառուցարկումն էր դասական պրիմորդալիստական մեթոդաբանությամբ, չնայած այս համատեքստում պրիմորդիալիզմը, որպես մետաայբուբեն քիչ է տարբերվում «nation building»-ի արևմտյան «այբուբեններից»:

Արցախյան հակամարտությանը ժամանակի ընթացքում նույնպես առաջարկվեց/ պարտադրվեց «մեկ պատմության» հայեցակարգը, առաջին հայացքից պարզ, իրականում՝ բարդ ու վտանգավոր հակադրությամբ՝ ցարական-խորհրդային, որը, վատը թողնելով անցյալում, «լավ» խորհրդայինը ներկայացնում էր որպես բացարձակ: «Ժողովուրդների եղբայրության» քարոզչության պայմաններում վատը (նաև կոնֆլիկտը որպես վերջինիս մաս) դուրս էր բերված կուսակցական-քաղաքական օրակարգից. *ԽՍՀՄ-ում ազգային հարցը լուծված էր մեկ անգամ և ընդմիշտ:*

Սրան զուգահեռ, սակայն, կային «պատմություն»-ներ. ադրբեջանական ու հայկական կողմերի, առօրեականությունների, ամենօրյա շփումների, խնդրի կարգավորման տեսլականների:

Սրանք ոչ միշտ էին համահունչ պաշտոնական «նարրատիվին»: Չունենալով նույն պաշտոնականին բացահայտ հակադրվելու հնարավորություն, «պատմությունները» դառնում էին արդեն լատենտ, մարգինալ, միկրո-պատմություններ, որ հիշում ու պատմվում էին թաքուն, աչքից հեռու, բարեկամների ու հարազատների միջավայրում:

Սրանք միկրոտեքստեր էին արդեն 20-րդ դարասկզբի բախումների, դաժանությունների, իրավունքների ոտնահարման, լայն առումով՝ պատմական անարդարության մասին և այսպես շարունակ:

Արցախյան հակամարտության և ընդհանրապես հակամարտությունների մարդաբանական ուսումնասիրության կարևոր խնդիրներից մեկը դրանք որպես ոչ միայն «պատմություն», այլ «պատմություններ» դիտարկելն է՝ *առօրեականության, ստերեոտիպերի, մարդկային պատմությունների, սիրո ու ատելության մարդկային «չափումների» ներառմամբ:*

Ելույթի հիմնական գաղափարն այն է, որ արցախյան հակամարտությունը այս համատեքստում դիտարկելու դեպքում, երբ մեկ պատմության նարրատիվին փոխարինելու է գալիս մի քանի պատմությունների նարրատիվը, գոնե գիտական-ակադեմիական միջավայրի համար հակամարտության խորքերը հասնելու և ըստ այդմ, հակամարտությունը նորովի վերլուծելու ու նոր կամ վերանայված նարրատիվներ ներկայացնելու հնարավորություն է:

Այդ նոր նարրատիվները, իրենց հերթին, պետք է ներկայացվեն առաջին հերթին քաղաքացիական իրավունքների իրացման համար պայքարի համատեքստում, այն, ինչ Արցախում, հետագայում՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզում տեղի է ունեցել տասնամյակներ և հարյուրամյակներ շարունակ:

Սկզբնապես այն ըստ էության պայքար էր հանուն տնտեսական իրավունքների և այդ իրավունքների ապահովման, որովհետև քոչվոր կացութաձի աստիճանական ու ագրեսիվ առաջխաղացման պայմաններում նստակյաց բնակչությունը պարտադրված նահանջում էր դեպի լեռներ ու նախալեռներ:

Հետո արդեն դա պայքար էր ինստիտուցիոնալիզացված ագրեսիայի դեմ, որովհետև քոչվորներին նստակեցության բերելու քաղաքականության համատեքստում խորհրդային իշխանությունը ուղղակի չէր տեսնում բազմաթիվ զանցանքներ: Այս քաղաքականության նպատակն արդեն Կովկասում ուժերի բալանսավորումն էր. Հայաստան-Վրաստան-թյուրքական միջավայր: «Զանցանքները», որոնք բազմաթիվ էին, իրականում դարձյալ մարդու քաղաքական և քաղաքացիական իրավունքների սահմանափակումների համատեքստում էին, ընդ որում դրանք քողարկվում էին «ժողովուրդների բարեկամության և եղբայրության», էթնիկության, էթնիկ ազգայնականության տարբեր կարգախոսներով: Ուժերի հավասարակշռման և հեշտ կառավարման համատեքստում պետք է դիտարկվեն նաև հարակովկասյան այլ հակամարտությունները Վրաստանում, Ադրբեջանում:

Մեծ հաշվով, անհատական ու խմբային իրավունքների անտեսման այս քաղաքականությունը և քաղաքականություններն էին, որ հանգեցրին հակամարտությանն ու փաստացի պատերազմական գործողություններին: